

ՀԱՐՈՐՈՒԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ցանկացազիր Է Յղել Լիբանանի Կարգապետին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Շայրազյան Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցանկացան զիր Է յղել Լիբանանի Հանրապետության վարչապետ Թամմամ Սալամին՝ Նոյեմբերի 12-ին Բեյրութում տեղի ունեցած ահաբեկչության կապակցությամբ, որը չորս տասնեակից ավել մարդկային անվերջ զոհերի է բազմաթիվ վիրավորների պատճառ է դարձել:

Խստորէն դատապարտելով ահաբեկչական գործողությունները՝ Վեհափառ Հայրապետը վշտակցություն և յայտնել զոհերի ընտանիքներին ու հարազատներին եւ Լիբանանի բարեկամ ժողովրդին:

«Աղօթում ենք, որ երկուստեք Տերը մխիթարություն պարգևի մահացածների հարազատներին եւ առողջություն շնորհի ահաբեկչությունից տուժած վիրավորներին:

Մեր մաղթանքն է, որ Լիբանանի բարեպաշտ ժողովրդը շուտով յաղթահարի առկա դժուարությունները եւ շարունակի իր խաղաղ կենսը ու ստեղծագործ աշխատանքը», - ասուած է Նորին Սրբութեան ցանկացազրում:

ՀԱԿԱՌԱԿ ԻՊ-Ի ԱՐԻՒՆԱԼԻ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՊԵՅՐՈՒԹՅԻՔ ՊԻՏԻ ՊԱՀԵՆ ԵՐԿՐԻՆ ԱՆԴՈՐԸ

Հինգշաբթի օր յետմիջօրէին երկու ահաբեկչական պայթումներ արձանագրուեցան Պեյրութի մէջ: Անձնասպանական պայթումներու միջոցաւ եղած ահաբեկչութեան զոհ զացին 43 քաղաքացիներ, մինչ վիրավորներուն թիւը անցաւ 230-ը: Չոհերուն մէջ էր նաեւ շրջանին մէջ շէշտուած ներկայութիւն ունեցող Հրգայալլայի մէկ պատասխանատուն: Մինչ լիբանանեան եւ միջազգային վաւերական պատասխանատուներ կը դատապարտէին եղած պայթումները, ԻՊ ահաբեկչեան խմբավարները, իր թուիթերեան էջին վրայ արձանագրութեամբ մը կը ստանձնէր ոճրային պայթումներուն պատասխանատուութիւնը: Լիբանանեան «Ալ ժատիտ» կայանը ակէի ու յայտարարեց, որ պայթումներէն զատ կար նաեւ 3-րդ անձնասպան մը, որ պայթումներուն հետեւանցով մահացած էր եւ չէր կրցած իր ականուած գոտին պայթեցնել: Տակաւին կը խօսուի 4-րդ ահաբեկիչի մը մասին, սակայն այդ լուրը մինչեւ այս պահը ստոր չէ: Շիի քաղաքացիներով բնակուած Պըրժ Ալ Պարաժնէ շրջանին մէջ եղած ահաբեկչութիւնը ուղղուած էր, ոչ միայն երկրի շիի համայնքի գաւակներուն կամ Հրգայալլային դէմ, այլ ամբողջ Լիբանանին: Եւ ստոր համար էն այսօր յայտնի է, որ տեղի ունեցած պայթումը ակելով ամբացուց նոր ծիւ տուած քաղաքական համաձայնութեան մը ընդհանուր ուղղութիւնը: Լիբանան-

ցիներ լաւ գիտեն, որ Սուրիոյ մէջ ուժեղացած ԻՊ-ն ու անոր քոյր կազմակերպութիւններուն հիմնական թիրախը Լիբանանն է եւ անոր կայունութիւնն ու ապահովութիւնը: Այս պատկերին դիմաց յայտնի է նաեւ, որ միջազգային ամենաբարձր շրջանակներ սկսեալ ՄԱԿ-էն, Եւրոպական Միութենէն, անցնելով Միացեալ Նահանգներ, Ռուսիա, Իրան ու Մեծտակաւ Արաբիա, բո-



լորը համամիտ են, որ Լիբանան հեռու պէտք է պահուի Սուրիոյ մէջ տարածուած հրդեհներէ: Հակառակ անոր, որ այս մօտեցումը իր բնական պատճառները ունի, սակայն յստակ է, որ շրջանին մէջ քաղաքական համաձայնութիւններու խմորման այս հանգրուանին Պեյրութ կը ներկայանայ, որպէս ահաբեկչութեան համար ամենէն թափանցիկ եւ հասանելի թիրախը: Երկրի կրօնական եւ համայնքային դրուածքին հետեւանցով Լիբանան կը շարունակէ մնալ խոցելի: Այս բոլորէն անդին սակայն երկրի քաղաքական ուժերուն միակամութիւնը, որ նաեւ շէշտակիօրէն յայտնի դարձաւ երէկ, ցոյց տուաւ, որ Լիբանանը նոր արհեստագործութիւններէ հեռու պահելու քաղաքական կամք մը գոյութիւն ունի: Ամէն պարագային գաղտնիք այլ չէ, որ միջին արեւելեան ջուրերը չեն կրնար խաղաղիլ այնքան ատեն, որ Սուրիոյ տագնապը լուծման հունին մէջ չէ կամ առնուազն այդ տագնապին համար լուծումներ որոնելու ընդհանուր մթնոլորտ մը չկայ:

ՍԱԳՕ ԱՐԵՍԸ

ՅՏՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՎԵՐՈՒ ՍՐԲԱԴԱՍՈՒՄԸ. Ի՞ՆՉ Է ԱՆՈՆՑ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԻՄԱՍՏՁ

Հայոց Տեղասպանութեան զոհերու 75-ամեակին առիթով 1989 Ապրիլի 29-ին հրապարակուած հաղորդագրութեան մը մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէ Ա. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ. կ'առաջարկէին «շարունակել Տեղասպանութեան զոհերու սրբադասման նախապատրաստական աշխատանքները»: Արդարեւ, նահատակներու կրօնական ոգեկոչման գաղափարը սկիզբ մէջ, ուր Տեղասպանութեան 1918-1920 տարիներուն, երբ կառավարութիւնը արդէն պաշտօնապէս դիմած էր Գեորգ Ե. Կաթողիկոսին, որպէսզի մարտիրոսները ընդգրկուին Հայոց եկեղեցւոյ ծիսական օրացոյցին մէջ:

Նոյեմբեր 2014-ին, զոյգ կաթողիկոսներու հովանաւորութեամբ կայացած Եպիսկոպոսական Ժողովը յայտարարեց, թէ Հայոց Տեղասպանութեան զոհերը պաշտօնապէս պիտի սրբադասուին 2015 Ապրիլի 23-ին: Հանդիսարար արարողութիւնը տեղի ունեցաւ Սուրբ Էջմիածնի մէջ, ուր Տեղասպանութեան 100-ամեակին առիթով Հայոց եկեղեցւոյ նոր սուրբերը հռչակուեցան եւ մեծարուեցան: Հայ եկեղեցւոյ կողմէ վերջին սրբադասումը կայացած էր ակելի քան 500 տարի առաջ:

Սրբադասումը սրբութեան հռչակման վերջին հանգրուանն է որով եկեղեցին կը հաստատէ թէ անձ մը կամ խումբ մը Աստուծոյ սրբութիւնը բաժնող կը նկատուին եւ թէ անոնց կենսաբան Զրիստոնէական Աւետարանի ճշմարտութեան եւ վաւերականութեան վկայութիւնն է: Սուրբերը կը միանան Աստուծոյ եւ կը բաժնեն երկնային կենսի յաւերժականութիւնը ամէն պղծութենէ հեռու՝ Աստուածային անվիճան կենսի մը մէջ, եւ կը գտնեն իրական կենսաբան Աստուծոյ կողքին: Այս առումով հնագոյն ժամանակներէն սկսեալ իրենց օրինակելի կենսով սուրբերը քրիստոնէութեան անբաժանելի մասնիկն են եւ իրենց յատկանշական տեղը ունին «Մէկ, Ընդհանրական եւ Անաբեկական Սուրբ եկեղեցւոյ» վարդապետական, ծիսական եւ պաշտամունքային աւանդութիւններուն մէջ:

Վերջին երեք տասնամեակներուն Հայոց Տեղասպանութեան զոհերու սրբադասման հարցը յանձնուած էր զանազան յանձնաժողովներու եւ եկեղեցական պատասխանատուներու սեղմ շրջանակի մը: Այս ընթացքին սրբացման աստուածաբանական իմաստը եւ անոր կապը՝ հաւատամքի եւ բարեպաշտութեան հետ, երբեք լայնօրէն չի ներկայացուցան հայ հաւատացեալին: Նախ եւ առաջ սուրբերը կը սրբադասուին հաւատացեալներուն համար: Տեղասպանութեան նահատակներուն սրբացումը չի կշարանկեր անոնց «պատուոյ շքանշան» շնորհել, այլ զանոնց կը դարձնէ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ Հայոց եկեղեցւոյ ակնարկանշական եւ հոգեւոր կրթական առաքելութիւնը շարունակելու ծառայող օրինակներ: Արդեօք Տեղասպանութեան զոհերու եկեղեցւոյ կողմէ սրբադասումը 100-ամեակի առիթով «խորհրդանշական արժէք» մը կը ներկայացնէ միայն, թէ նոր սուրբերու հռչակումը պիտի ծառայէ որպէս բացառիկ առիթ մը վերանորոգելու եւ վերակենդանացնելու Հայոց Առաքելական եկեղեցին՝ 21րդ դարուն: Այս հարցադրումը լուրջ խորհրդածութեան կը կարօտի:

Քաղաքական եւ աստուածաբանական հարցեր
Հիմա որ Տեղասպանութեան նահատակները սրբադասուե-

ցան, Հայ եկեղեցին կը գտնուի դաւանաբանական հրամայականի մը առջեւ, այսինքն անոնց այլեւս զոհեր չեն, այլ Քրիստոսի յաղթականները: Այլեւս չենք կրնար իրենց մահը ողբալու իմաստ հոգեհանգիստներ կատարել, ինչպէս որ սովոր էինք: Փոխարէնը Ս. Պատարագի ընթացքին պէտք է իշխեն իրենց անունները, խնդրելով անոնց միջնորդութիւնը եւ տօնելով իրենց յաղթանակը մահուան դէմ, ի Քրիստոս եւ անոր միջոցաւ: Տեղասպանութեան յիշատակութեան սգապատիր եւ տխուր մթնոլորտը այժմ պէտք է փոխարինուի «տօնակատարութեամբ»: Չոհերը այլեւս զոհ չեն, այլ սուրբեր որոնք կ'ապրին Աստուծոյ փառքին մէջ, այսինքն միացած են Աստուծոյ՝ յափտեական կենսի մը մէջ, գերծ ամէն պղծութեն եւ գառձ են Անոր ճշմարտութիւնը: Ուրեմն հարց կը ծագի թէ արդեօք Հայերը պատրաստ են իրենց զոհերը նկատելու Քրիստոսի մահուան եւ յարութեան վկաներ, որոնց համար հարիւր հազարաւորներ իրենց կենսը տուին - փոխանակ տեսաբար իրենց զոհերը նկատելու:

Քաղաքականօրէն Տեղասպանութեան 50-ամեակէն ի վեր Հայերը հաւաքաբար ընդհանրապէս ամբողջ աշխարհին եւ յատկապէս Թուրքիայէն արդարութիւն կը պահանջեն Տեղասպանութեան մէկ ու կէս միլիոն զոհերուն համար: Մինչ զոհերուն սրբադասումը փաստօրէն (de facto) կը լուծէ անոնց կենսի համար արդարութեան հարցը, եկեղեցւոյ սուրբերուն համար քաղաքական արդարութեան պահանջը կը մնայ խնդրայարոյց: Առաւել, Թուրքիոյ հետ հողային հարցը կրնայ ակելի եւ կ'ընտրուի: Ինչպէս սովորութիւնն է այլ սուրբերու պարագային, արդեօք՝ Հայերու նահատակութեան վայրերը պէտք է որպէս սրբավայրեր նկատուին կամ՝ «Սուրբ Հողեր»: Տակաւին շատ քաղաքական անուղղակի անորոգարձներ կան որոնք պէտք է ուշադրութեամբ քննարկուին:

Տեղասպանութեան մարտիրոսներու սրբադասումը պէտք է ընաւ նկատուի որպէս 100-ամեակի իրարարձութեան յանդէպ «փայլք» բերող եղելութիւն մը: Նոյնիսկ թէ Թուրքիան եւ աշխարհի տարբեր երկրները կը շարունակեն ժխտել Տեղասպանութիւնը, սրբադասումը պէտք է նկատուի իրեն այս ուրացման հակադարձ պատասխան մը եւ մեր զայրոյթին մէջ մեր զոհերը մեծարելու գերագոյն ճիգ մը, զանոնք որպէս սուրբեր յայտարարելով:

Մեր զոհերուն հանդէպ անարդարութիւն պիտի ըլլայ նկատի բառնել անոնց Քրիստոսի համար նահատակութիւնը եւ անոր անորոգարձը մեր կենսերուն վրայ որպէս անհատներ եւ որպէս ազգ: Ինչպէս աշխարհիկ կենսի աստուան «երեւելիներ», եկեղեցւոյ սուրբերը պաշտամունքի եւ հետեւելու արժանի օրինակներ են: Որպէս հայ քրիստոնէաներ պէտք է կարենալ ապրիլ սուրբերուն արժանիքները եւ հետեւիլ անոնց «երկնային թագաւորութեան» հասնելու օրինակին: Տեղասպանութեան զոհերու սրբադասումը՝ կը կշարանկէ շարունակել անոնց Քրիստոսի վկայութիւնը Հայ եկեղեցւոյ առաքելութեան եւ Աւետարանի քարոզչութեան միջոցաւ:


*Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան Օքսֆորտ համալսարանի դասախօս է:
Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան
(«Նոր Յառաջ» 05.11.2015)

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԶԵԾԻՆԵԱՆԻ «20 ԿԱՆԱԴՂԱՆՆԵՐ»-Ը՝ ԹՐԹԵՐԵՆԻ ԹԱՐԳԱՄԱՆՈՒԱԾ ԳՐԵԻ ՇԱՊԻԿԻՆ

Բոստոն Մասսաչուսեթս: 2015 թ-ի Հոկտեմբերի 29-ին ստացալ Եվրոպայի մի ամակ Ստամբուլի «Evrensel Publishing House»-ի ներկայացուցիչ կողմից, որով հայցում էին իմ հեղինակային համաձայնագիրը կրկնօրինակելու իմ՝ 1976 թ-ին նկարած «20 կախաղաններ» ստեղծագործութիւնը՝ որպէս գրքի շապիկ:

Նամակի մէջ մասնաւորապէս ասուել էր.
«Մեր հեղինակ Նեւազ Օսարան, Հայ եւ յոյն կալուածքների թուրքացումը օսմանեան կայսրութիւնում եւ հանրապետութիւնում» թեմայով հետազոտութիւնների ընթացքում պատահաբար հանրային գրադարանում յայտնաբերել է Եղորտի Չոփուրեանի «20 կախաղաններ» գիրքը՝ խմբագրուած նահատակների բարեկամների, ինչպէս նաեւ ակնատեսների վկայութիւնների վրայ եւ հրատարակուած 1921 թ-ին Ստամբուլում ի յիշատակ նահատակուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան 20 անդամների: Այս գիրքը Արիս Նաչիին հայերէնից թարգմանել է թուրքերէն՝ «Փարամագ: Պայագիտի 20 կախաղանները» վերնագրով, որը մատուցուելու է թուրք ընթերցողին: Հետեւաբար մենք խոնարհաբար հայցում ենք Ձեր թոյլտուութիւնը՝ օգտագործել Ձեր արուեստի գործը՝ որպէս վերոյիշեալ գրքի շապիկ՝ համաճում լինելով, որ այն կը տայ գրքին բացառիկ նշանակութիւնը:
Վերոյիշեալ նամակին կցուած էր նաեւ 1921 թ-ին հրատարակուած՝ Եղվարդ Չոփուրեանի գրքի կրկնօրինակը, թուրքերէն թարգմանութիւնը, ինչպէս նաեւ գրքի շապիկի նախնական ձեւաւորումը, որտեղ նկարից միայն մի հատուած էր պատկերուած: Ուղարկուած նիւթերը ուսումնասիրելուց յետոյ, նպատակայարմար գտալ ընդառաջել այն պայմանով, որ գրքի

շապիկի նկարը լինի ամբողջական, ինչպէս նաեւ հեղինակի անունը՝ Դանիէլ Վարուժան Զեծինեան, նկարի ստեղծման թուականն ու պատմութիւնը նշուած լինեն գրքի առաջին էջում:



Սովորելով Երեւանի գեղարուեստաթատերական ինստիտուտում՝ 1976 թ-ին որպէս ասարական դիպլոմային աշխատանք ընտրել էի Հայոց ցեղասպանութեան թեման՝ իմ աշխատանքում պատմելով «20 կախաղանները»: Այս հսկայական աշխատանքի գաղափարը ծնուել էր իմ մտքում վաղ դպրոցական տարիներին, երբ ամէն տարի Յունիսի 15-ին, բոլոր աշակերտներով հաւաքում էինք Հայկաի Կիլիկեան վարժարանի բակում՝ լսելու տնօրէնի ոգեշունչ ելոյթը եւ յարգելու քսան

նահատակների յիշատակը:
Լինելով Հայկաի Կիլիկեան ճեմարանի շրջանաւարտ՝ որոշեցի նկարը նվիրել Հայկաի Հնչակեան ակումբին, եւ նոյն թուականին իմ խնդրանքով վերոյիշեալ աշխատանքը Սփիւռքի կրկնօրինակութեամբ Երեւանի տղապիտուեց Հայկա, որից յետոյ նկարի մասին պաշտօնական տեղեկութիւն չեմ ստացել:

40 տարի անց 20-ների արձագանքը լսուեց Ստամբուլից, եւ սոյն թուականի Նոյեմբերի 7-ին, «Evrensel Publishing House»-ը իմ ստեղծագործութիւնը, որպէս «Փարամագ: Բայագիտի 20 կախաղանները» թրքերէն թարգմանուած գրքի շապիկ, ներկայացրեց Ստամբուլի գրքի 34-րդ միջազգային ցուցահանդէսում, որը գրքի ամենամեծ տօնակաճանձն է Թուրքիայում, իսկ Նոյեմբերի 8-ին Evrensel հրատարակութեան կողմից յատուկ միջոցառման շրջանակներում քննարկուեց գիրքը, ինչպէս նաեւ, Հայոց ցեղասպանութիւնն իր 100-րդ տարեիցին» թեման:

100 տարի է անցել այն օրից, երբ Փարամագի եւ նրա 19 ընկերների անշունչ մարմինները ճօճուել էին Ստամբուլի գորշ երկնակամարի ներքոյ, բայց նրանց ուրուականները մինչ այսօր թափառում են Ստամբուլի փողոցներում, թափառում սերունդների ենթագիտակցութեան մէջ՝ մի անգամ եւս համոզուելու, որ տարիների փոշին չի կարող մոռացութեան մատնել՝ իր մէջ թաքցնելով ճշմարտութիւնը՝ ստիպելով Թուրքիային վաղ թէ ուշ հաշտի նստել իր անցեալի հետ՝ ճանաչելով Հայոց ցեղասպանութիւնը՝ որպէս արդարութեան ուշացած արձագանք:

Դանիէլ Վարուժան Զեծինեան